

ՎԵՐԱ ՍԱՀԱԿՅԱՆ

«ՔԵԼԵԿՅԱՆ» ԵՎ «ՍԻՍՎԱՆ» ՈՐԲԱՆՈՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ¹

Ադանայի նահանգի մեջ մտնող Չորք-Մարզպան² գյուղաքաղաքի, կամ ինչպես անվանում են որոշ հուշագիրներ՝ «Նարնջաստանի»³ բնակիչները նախքան Հայոց մեծ եղեռնը զբաղվում էին մետաքսի ու նարնջի մշակմամբ: Տեղացի և օտարերկրացի ներդրողները բերքն արտահանում էին Ձմյուռնիա, Կ. Պոլիս, Օդեսա, Լիվերպուլ և այլ քաղաքներ⁴: Շնորհիվ այգեգործության ընձեռած հնարավորությունների՝ քաղաքը կարողացել էր իր շուրջը համախմբել հարևան բնակավայրերի բնակչությանը, ովքեր կա՛մ հաստատվել էին Չորք-Մարզպանում, կա՛մ ժամանակավոր կերպով աշխատում էին նրանց ընդարձակ այգիների մեջ: Տնտեսական պայմանների առկայության, համախմբվածության և հերոսական աննկուն ոգու շնորհիվ, ի թիվս մի քանի այլ հայկական բնակավայրերի, Չորք-Մարզպանը ևս կարողացել էր հերոսամարտ մղել՝ տեղի հայությանը պաշտպանելով կոտորածներից:

Սակայն հերոսական ոգին և տնտեսական պայմանները դեռևս բավարար չեն կարող լինել հզոր կայսրության կողմից ծրագրված և կանոնավոր բանակի մասնակցությամբ իրականացվող ցեղասպանական ծրագրին դիմակայելու համար: Յեղասպանություն, ազգայնական շարժում, որոնք Օսմանյան կայսրությունում և Հանրապետական Թուրքիայում ուղղված լինելով հատկապես քրիստոնյաների դեմ⁵, ի վերջո հանգեցրին նրան, որ Թուրքիան ամբողջությամբ տիրեց պատմական հայկական բնակավայրերին, բնիկների նյութական կարողությունը, իսկ ողջ մնացած վերապրող հայությունն այդուհետ սփռվեց աշխարհով մեկ՝ ստեղծելով հայ սփյուռքի գաղթօջախներ:

¹ Հոդվածի սեղմ տարբերակը տե՛ս <http://www.houshamadyan.org/en/mapottomanempire/vilayet-of-adana/doertyol/education-and-sports/schools.html>

² Դյորթյոլ (Դյորթ-յոլ, Ճուկ Մարզպան, Չոք-Մերզվեն, Ճուկ Մերզվեն. Ճուկ Մարզպան, Չորք-Մարզպա, Չոք-Մարզպան, Չոք-Մարզպան, Չոք-Մարզպան, Ումրանիյե, գյուղաբնակավայր գտնվում է Կիլիկիայի Ադանա նահանգում, Սև լեռների փեշերին, Դելիշայ կոչվող գետի մոտ, Բինարես լեռան ստորոտին: Ներկայումս գտնվում է Թուրքիայի Հանրապետության Հաթայ նահանգում:

³ Գ. Գառեան, *Նարնջաստաններուն կանչը* = *The Call of the Orange Groves*, Ուլրինկ, Մայրենի, 2002:

⁴ <http://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/adanavilayet/dortyol/economy/dortyoltrades.html>

⁵ Baskin Oran, *Atatürk Milliyetçiliği, Resmi İdeoloji Dışı Bir İnceleme*, Անկարա, 1988, էջ 146:

եղեռն վերապրածները կամ նրանց սերունդները գաղթօջախներում ձեռնամուխ եղան իրենց հուշերը թղթին հանձնելու աշխատանքին: Այս հուշագրությունները հետագայում հանգիստացան տվյալ շրջանի վերաբերյալ կարևոր սկզբնաղբյուրներ⁶:

Գրված հուշերի և հուշագրությունների հավաքագրման, ուսումնասիրության և տպագրության ուղղվածությամբ ահռելի աշխատանքներ կատարվեցին Յեղասպանությունից հետո կազմավորված հայրենակցական միությունների կողմից: Այս միությունները, կապեր հաստատելով համաքաղաքացի վերապրողների կամ նրանց սերունդների հետ, հավաքում էին տվյալ հայկական բնակավայրի վերաբերյալ զանազան իրեր՝ նամակներ, հուշեր, նկարներ, կիրառական կամ այլ արվեստի նմուշներ՝ դրանց հիման վրա վերակերտելով իրենց ապրած շրջանի պատմական նկարագիրը⁷:

Դժբախտաբար, քիչ թիվ չեն կազմում շուսումնասիրված կամ ցայսօր անհայտ մնացած աղբյուրները: Այդ տարիներին դժվարին խնդիր էր գտնել ու կապեր հաստատել հուշագրությունների հեղինակների հետ: Այդպիսին է նաև բնիկ շորքմարզպանցի Սամվել Պոռանյանի՝ ուշագրությունից վրիպած հայատառ թուրքերեն հուշագրությունը, որի բնօրինակը թեև մեզ համար մատչելի չէ, սակայն կարծում ենք՝ չի կարելի անհետացած համարել:

«Հուշագրություն Ճուկ-Մարգեպանի» վերնագրված աշխատանքը հեղինակին անձամբ տրամադրել է 1946 թ. Դամասկոսից Հայաստան ներգաղթած Հարություն Պալյանին: Վերջինս, Հայոց Յեղասպանության 50-ամյա տարելիցի առթիվով աշխատանքը թարգմանել է՝ «հայացրել» և պատրաստել տպագրության: Ինչ-ինչ հանգամանքների պատճառով, աշխատանքը մնացել է անտիպ՝ մատնվելով մոռացումի: Սույն հոդվածը հարստացրել ենք Սամվել Պոռանյանի վերը նշված հուշագրությունից քաղված որոշ մանրամասներով: Ներառելով անտիպ այս սկզբնաղբյուրը՝ փորձել ենք հիշատակել նաև այն անձանց, ովքեր ջանացել են կարևոր վկայություն թողնել հետագա սերունդներին⁸:

⁶ Հայկական բնակավայրերի վերաբերյալ գրված հուշագրությունների ամբողջ ցանկը տե՛ս Ottoman Armenians Life, Culture, Society, vol. 1, ed. by *Vahe Tachjian*. Houshmadyan Publication, Berlin, 2014, p. 234-264.

⁷ Այսօր նման աշխատանք է կատարում «Հուշամատյան» միությունը:

⁸ Հուշագրությունը բաղկացած է 505 մեֆեմագիր էջից: Ի սկզբանե գրվել է հայատառ թուրքերեն՝ Սամվել Պոռանյանի ձեռքով, ով եղել է նաև Ճուկ-Մարգեպանի (հեղինակն այդպես է անվանում գյուղաբնակավայրը) երեք հերոսամարտերի մասնակից, «Սիավան» որբանոցի շինություններից մեկի հատակագծի հեղինակը: Սամվել Պոռանյանին աջակցել է նաև համաբնակավայրի Սարգիս Մովսիսյանը: Այդ տարիներին մեֆեմագրության և տեխնիկական այլ աշխատանքների մեջ իր գործուն մասնակցությունն է բերել Գրիգոր Կյոֆչյանը (Կէօֆչեան): Վերջինիս մասին Հարություն Պալյանը արտահայտվում է հետևյալ կերպ. «Սարգիս Մովսիսյանը այս դժվարությունը ևս կարողացավ լուծել: Նա Լենինականում մեֆեմագրող գտնել չկարողանալու պատճառով, մեկնեց Երևան, որտեղ և կարողացավ գտնել Գրիգոր

Այսպիսով, հաշվի առնելով վերը նշված և այլ աղբյուրների ընձեռած տեղեկությունները՝ փորձենք շարադրել «Քելեկյան» և «Սիսվան» որբանոցների գործունեության պատմությունը:

1909-ի ապրիլի մեկին տեղի ունեցած Ադանայի կոտորածներից⁹ հետո հայաշատ, բարեկեցիկ և ապահով համարվող Չորք-Մարզպանն իր գիրկն է առնում անդամահատված ու լկված հայ որբերին: Մ. Գրիգոր Լուսավորիչ (Մ. Փրկիչ¹⁰) եկեղեցու ավագ քահանա տեր Խորեն Ալեքսանյանը որբերի կեցության համար տրամադրում է սեփական բնակարանը¹¹: 150 որբից բաղկացած որբանոցի տեսուչ է նշանակվում Փառեն վրդ. Մելքոնյանը, իսկ որբերի խնամքին են նվիրվում Բաղդասար Գալեմբերյանն ու օրիորդ Սիրանուշը¹²: Թեպետև երեխաները հաճախում էին Վարի թաղում գտնվող Ազգային վարժարանը, բարեպաշտ ու առաքինի այս քահանան, բնակարանը տրամադրելուց զատ, հնարավորին չափ անձամբ հոգ էր տանում նաև նրանց հայեցի կրթության ու դաստիարակության մասին¹³: Որբանոցի գոյատևման համար անհրաժեշտ հատկացումները կատարում էր «Ազգանվեր Բարեսիրական կազմակերպությունը», որը, ինչպես և «Հայուհյաց ընկերությունը», ստեղծվել էր կրթական ընդհանուր շարժման մեջ իգական վարժարաններ բացելու առաքելությամբ¹⁴: 1912-ին, երբ «Ազգանվերը» դադարեցրեց հատկացումներ կատարել, տեսչությունը ստիպված եղավ որբերին ցրել¹⁵:

Միևնույն թվականին Չորք-Մարզպանում ավարտին էին մոտենում ՀԲԸՄ կողմից նախաձեռնած որբանոցի շինարարական աշխատանքները, որոնք սկիզբ էին առել դեռևս 1910 թվականին¹⁶:

Կյոֆչյանին: Ճուկ-մարզեպանի ազնվական գերդաստանի շտապիղ և նոր սերնդի մտավորականներից հանդիսացող այս հայրենասեր ներկայացուցիչը իր թանկագին ժամերը և հանգիստը զոհեցավ, կատարեց մեկնագրության դժվարին աշխատանքը: Այս անձանց կատարած աշխատանքը՝ ի նպաստ պատմագրության, արժանի են հիշատակության և մեծ գնահատանքի» [Հուշագրություն Ճուկ Մարզեպանի, էջ 500]:

⁹ Ադանայի կոտորածների մասին տե՛ս Հ. Թերզեան, Կիլիկիոյ աղէտը, Կ. Պոլիս, 1912 թ., 864 էջ:

¹⁰ Այս եկեղեցիների անվան վերաբերյալ մանրամասներ տե՛ս Վ. Սահակյան, «Չորք-Մարզպանի ուխտավայրերի անուան և գտնուելու վայրերի շուրջ», էջմիածին, Հ. տարի, հոկտեմբեր, 2014, էջ 55-62:

¹¹ Մ. Խապրիկ, Եթէ Չորք-մարզպանը ինձի հետ խօսէր..., Պէյրուս, 1983, էջ 42:

¹² Մ. Գոնայեան, Պատմութիւն Չորք Մարզպանի (Տէօրթ-եոյ) Գիւղաքաղաք մը Կիլիկիոյ մէջ, Լոս Անճելըս, 2005, էջ 151:

¹³ Մ. Պողոսեան, Հուշագրություն Ճուկ Մարզեպանի, էջ 95:

¹⁴ Տեղեկագիր Միացյալ ընկերությանց Հայոց, Կ. Պոլիս, տպ. Մեմուայի հավատարմ, 1883, էջ 4:

¹⁵ Մ. Խապրիկ, նշվ. աշխ., էջ 42:

¹⁶ Ոսկեմատեան Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, 1906-1931, Ա. հ., Բարիզ, էջ 137:

Որբանոցի կառուցման նախապատմությունը հետևյալն է. 1909-ին տեղի ունեցած Չորք-Մարզպանի հերոսամարտը¹⁷ գյուղաքաղաքի վրա էր բևեռել հասարակական ու քաղաքական գործիչների, գրողների ու մեծահարուստների ուշադրությունը: Գրիգոր Զոհրապը, Սիամանթոն, Զապել Եսայանը, Արշակունցի Թեոդիկը, Մուշեղ Արքեպիսկոպոս Սերոբյանը, Սահակ կաթողիկոս Խաչատրյանը, «Հայոց Միացյալ Ընկերություն»-ը, «Հայունհայց Ընկերություն»-ը, «Կարմիր Խաչ»-ը, «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն»-ը և այլ կազմակերպություններ ու անհատներ ցանկություն էին հայտնել այցելելու Չորք-Մարզպան նրանց դրությունը տեղեկանալու, իսկ անհրաժեշտության դեպքում՝ աջակցություն ցուցաբերելու նպատակով¹⁸: 1909-ին Չորք-Մարզպան այցելած անձանց մեջ էր եղել նաև Տիգրան Խան Քելեկյանը¹⁹, ով, մոտիկից ծանոթանալով տեղացիների խնդիրներին, ցանկություն էր հայտնել որբանոց կառուցելու նպատակով տրամադրել անհրաժեշտ գումար: Այսպիսով, ՀԲԸՄ-ի կողմից նախաձեռնած որբանոցի շինարարությունն սկսելու և ավարտին հասցնելու նպատակով Տիգրան Քելեկյանը մաս-մաս կատարում է 65 000 ֆրանկ նվիրատվություն: Շնորհիվ այդ նվիրատվության և հետագա աջակցության՝ որբանոցը կրում է «Քելեկեան» անունը²⁰: Ըստ մեզ մոտ եղած անտիպ հուշագրություն՝ որբանոցի համար ընտրված հողը Պոռանյան ընտանիքն հատկացրել է ձրիաբար²¹:

¹⁷ 1895-ի հոկտեմբերի 31-ին թուրքական կանոնավոր բանակի դեմ մղած հերոսամարտը տևել է 8 օր: Աղանայի կոտորածներից հետո (1909, 1 ապրիլ) թուրքական կանոնավոր բանակը երկրորդ անգամ հարձակվել է Չորք-Մարզպանի վրա: 13 օր տևած դիմադրությունից հետո հակառակորդն ի վերջո դադարեցրել է պաշարումը և բանակցել տեղացիների հետ: Տե՛ս Մ. Տե-Ստեփանեան, Քաջերու հայրենիքը (Դրուսագ մը հերոսական Չորք-Մարզպանէն), Պէյրոս, տպ. Զարթոնք, 1984:

¹⁸ Մ. Գոնայեան, նշվ. աշխ., էջ 151:

¹⁹ Քելեկեան Տիգրան Կարապետի, ծնվել է Կեսարիայում 19.01.1868 թ., մահացել 30.01.1951 թ.: Հայ ազգային քաղաքական գործիչ, հնագետ, դիվանագետ, հնահավաք, 1901-22 թթ. Նյու-Յորքում Իրանի հյուպատոս: Պարսից շահից ստացել է Խան տիտղոսը: 1910 թ. ՀԲԸՄ բարերար էր, իսկ 1929-ից՝ փոխնախագահ: Նյուրքական և բարոյական աջակցություն է ցուցաբերել նկարիչներ Ժ. Բ. Բրաբին, Ա. Մատիսին, Պ. Պիկասսոյին և այլոց: 1946 թ. Աջակցել է ներգաղթի կազմակերպմանը: Մաշտոցյան Մատենադարանում է պահվում XIII դարում գրիչ Իգնատիոսի ձեռնով Հոռոմոսի վանքում ընդօրինակված, բուսական ընտիր լուսանցազարդերով մագաղաթյա Ավետարանը (ՄՄ 9649), որը Տիգրան Քելեկյանը Գարեգին Ա. Կաթողիկոսի ձեռամբ նվիրաբերել է էջմիածնի մատենադարանին: Իգնատիոսի Ավետարանը Մաշտոցյան Մատենադարան է տեղափոխվել Ազգային գրադարանից 1956 թ.: Տե՛ս ՄՄ հիմնական քարտարան, թիվ 9649, տե՛ս նաև Գարեգին Ա. Կաթողիկոս, Հիշատակարանք ձեռագրաց, Ա., Տպ. Կաթողիկոսության Հայոց Կիլիկիոյ, Անթիլիաս, ՌՆ-1951, էջ 899:

²⁰ Միություն, Ամսօրեայ պաշտօնաթերթի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության, Գանիրէ, Ա. տարի, յունվար, 1912, թիւ 1, էջ 72:

²¹ Մ. Պոռանյան, նշվ. աշխ., էջ 112:

100 հոգու համար նախատեսված որբանոցի բացումը տեղի է ունենում 1912-ի հոկտեմբերին՝ իր հարկի տակ ընդունելով 65 որբի²²։ Հաջորդ տարի նրանց թիվը հասնում է 85-ի²³։ Որբանոցի տնօրեն է նշանակվում Խ. Գոռուզյանը։

Պոռանյան հուշագիրը շատ գեղեցիկ է ներկայացնում տեղացի մայրերի վերաբերմունքն ու գթասրտությունը որբերի հանդեպ։ Ըստ հուշագրի՝ շորք-մարզպանցի մայրերը հաճախ են գաթաներով, մրգերով ու շորեկով մոտեցել որբանոցի սաներին՝ նրանց բաժանելով գոգնոցի տակ պահած կերակուրները։ Չափազանց մեծ զգացմունքայնությամբ լեցուն այս հատվածների կողքին հուշագիրը գրում է, թե տեսչությունը միշտ ընդդիմանում էր մայրերին՝ ասելով, թե պետք չէ երեսանների մեջ դաստիարակել ուրիշի ձեռքին նայելու հոգեբանությունը²⁴։

1913-ին որբանոցին կից կառուցվել էր նաև արհեստանոց։ Որբանոցի տեսչությունը, շահագործման երեք տարիների ընթացքում մեծ ուշադրություն էր դարձնում որբերի կրթության ինչպես նաև որևէ արհեստ յուրացնելու վրա։ Որբերը պարտադիր կերպով հմտանում էին որևէ արհեստի մեջ՝ սեփական ապրուստը հետագայում ինքնուրույն ապահովել կարողանալու նպատակով։

Որբանոցի բնականոն աշխատանքները խաթարվում են Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին։ Նորակառույց շինությունը ծովին մոտ կառուցված լինելու պատճառով սկզբից ևեթ գրավում է թուրքերի ուշադրությունը։ Շենքում սկսում են իրականացնել ամենօրյա խուզարկություններ։ Շատերը բացահայտորեն մեղադրվում են անգլիացիների օգտին լրտեսության մեջ, մի քանիսին նույնիսկ կախաղան են հանում²⁵։ 1915 թ. մարտի սկզբներին Օսմանյան կառավարությունը գրավելով «Քելեկյան» որբանոցի շենքը՝ այն վերածում է վարժարանի։ 20 որբ ուղարկվում են Խառնըրի [Հարունի] գերմանական որբանոց, 30-ը՝ Ադանա, իսկ որոշ որբեր տարվում են թուրքական այլևայլ որբանոցներ։ 1915-ին, ինչպես բոլոր հայկական բնակավայրերի, նույնպես և Չորք-Մարզպանի բնակչությունը ենթարկվում է տեղահանության՝ կրելով հատուկ ցեղասպանական նպատակով իրագործվող տարատեսակ բռնություններ ու զրկանքներ։

Այսպիսով, 1915-1918 թթ. Օսմանյան կայսրության կողմից իրականացվող ցեղասպան գործողությունների ընթացքում Արևմտյան և Կիլիկյան Հայաստանի բազմահազար որբեր թուրքացվեցին, վաճառվեցին օտարներին, անհետ կորան, դարձան համաճարակների զոհ, իսկ Չորք-Մարզպան գյուղաքաղաքն այս երեք տարիների ընթացքում վերածվեց ավերակի, քանդվեցին շենքերն

²² Միովիին, Ամսօրեայ պաշտօնաթերթ, Ա տարի, 1912 թ., թիւ 11, էջ 165։

²³ Միովիին, Ամսօրեայ պաշտօնաթերթ, Բ տարի, 1913 թ., թիւ 18, էջ 90։

²⁴ Ս. Պոռանյան, նշվ. աշխ., էջ 114։

²⁵ Պայքար տարեգիրք, Բոստոն, 1947, էջ 66-67։ Տե՛ս նաև Բ. Եղիայեան, Ադանայի Հայոց Պատմություն, Անթիլիաս, 2012, էջ 682։

ու շինությունները, չորացան կամ մարդկային ձեռքով ոչնչացվեցին երբեմնի դրախտային պարտեզները:

Պատերազմի ավարտից հետո Չորք-Մարզպանը ստացավ ֆրանսիական հովանավորություն: Մահվան դիմակայած չորքմարզպանցիները վերադարձան՝ ապավինելով ֆրանսիային: 1918-ին ընդհանուր հաշվով Չորք-Մարզպան տեղափոխվեցին ընդամենը 3000 վերապրող, իսկ շրջակա բնակավայրերից նրանց միացան 1000 վերապրող միայն²⁶: Այստեղ հաստատված որբերին տեղավորելու նպատակով ՀԲԸՄ-ը նախ վերակառուցեց «Քելեկյան» որբանոցը, ապա կարիք զգացվեց նաև ժամանակավոր կացարանների, քանի որ քեմալական զորքերի առաջխաղացումների հետևանքով բնակչության կտրուկ աճ էր նկատվում²⁷: Այս պայմաններում ժամանակավոր կացարանները չէին կարող բավարարել օրեցօր սովարացող որբերին, ուստի, Միությունը ձեռնարկեց 800 որբի համար նախատեսված երկրորդ՝ «Սիսվան» որբանոցի շինարարական աշխատանքները՝ ներդնելով պատկառելի մի գումար՝ շուրջ 30 000 եգիպտական ոսկի:

Ժամանակակիցներից ոմանք «Սիսվան» որբանոցի կառուցման ձեռնարկը համարել են ծախսատար և անհեռատես, մասամբ էլ որակել իբրև անբարեխիղճ քննիչների գործելաոճի արդյունք²⁸: Այս առիթով Սուրեն Պահլավունին Քելեկյան-Սիսվան որբանոցներին նվիրված փոքրածավալ աշխատության մեջ գրում է, թե քննադատելի են այն քննիչները, ովքեր փորձ չունեին, կամ քննչական գործունեության ընթացքում իշխանավայել պատվասիրություններով մեծ հարգանքի էին արժանանում որբանոցի հանձնախմբի կողմից և աչք փակում տարատեսակ անկարգությունների վրա²⁹: Կարծում ենք՝ Պահլավունին միմիայն անձնական դրդապատճառներով չափազանցել է իր ասելիքը:

Իրականում, 1920-ին, Չորք-Մարզպանը վերածվել էր մի շրջանի, որտեղ կենտրոնացել էին ցեղասպանություն վերապրած և մահին դիմակայած հայությունների բեկորները: Շատերը կարծում էին, թե դա ամենաապահով վայրն է, քանի որ 1920-ի Սևրի դաշնագրով այն ֆրանսիական հովանավորության տակ գտնվող Սիրիայի մաս էր: Ֆրանսիական իշխանություններն էլ իրենց հերթին քաջալերում էին տարբեր շրջաններից գաղթականների հաստատումը Դյորթյու-

²⁶ Ոսկեմատեան, էջ 137:

²⁷ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն: Դար մը պատմություն Հայ Բարեգործական Ընդհանուր Միության /ՀԲԸՄ, Կեդրոնական վարչություն, հ. Առաջին, 1906-40, դեկավարուքեամբ՝ Ռ. Գեորգեանի և Վ. Քաշճեանի, Գահիրե-Փարիզ-Նիւ Եորթ, ՀԲԸՄ Կեդրոնական վարչություն, 2006, I հ., էջ 102:

²⁸ Ս. Պահլավունի, Քելեկյան-Սիսուան որբանոցներու կեանքէն: Ոճիրի մը առիթով, Պէյրուք, Սուրիա, 1929, էջ 12:

²⁹ Նույն տեղում:

լում: Իրավիճակը իսկապես ստիպում էր մտածել երկրորդ՝ ընդարձակ որբանոց ունենալու մասին:

1921-ի մարտին տեղի ունեցած Լոնդոնյան բանակցությունները, սակայն, կտրուկ փոխեցին դեպքերի ընթացքը: Ֆրանսիան նոր հողային զիջումներ արեց Թուրքիային, այդ թվում՝ Փայաս-Մեյդան-էքբեզ գծից հյուսիս ընկած տարածքը, որի մեջ էր մտնում նաև Դյորթյուր: Սահմանագիծը վավերացվեց 1921 թ. հոկտեմբերի 20-ին: 1922 թ. հունվարի 5-ին ֆրանսիական կողմը Թուրքիային հանձնեց ամբողջ Ադանայի նահանգը³⁰:

Այսպիսով, մինչ դյորթյուրցիները ծրագրում էին որբանոցը քուլեջի վերածել, վրա հասավ Կիլիկիայի հայաթափումը: Որբանոցի շենքը բռնագրավվեց թուրքական իշխանությունների կողմից և վերածվեց գորանոցի³¹:

Չորք-Մարզպանում ապաստանած հայությունը, այս անգամ արդեն Ֆրանսիայի թողտվություններ, ենթարկվեց բռնագաղթի: Ֆրանսիական կողմի պատասխանատվությամբ 1921-22-ի ձմռան ամիսներին Մերսինի և Դյորթյուրի երկու որբանոցները փոխադրվեցին Լիբանան և Սիրիա: Սրանց հիման վրա ստեղծվեցին «Քելեկյան» (տղաների) և «Սիսվան» (աղջիկների) որբանոց-նախակրթարանները: Իգական որբանոցը հաստատվեց Աշխուտ գյուղում (Լիբանան), իսկ արական որբանոցը՝ նրան մոտ գտնվող հայ կաթողիկեների Ջմմաուի վանքում³²:

Հետագա տարիների ընթացքում «Քելեկյան-Սիսվան»-ն իրենց գիրկն առնան Բարեգործականի մյուս որբանոցների որբերին. 1926 թ. Միություն Երուսաղեմի իգական «Վասպուրական» և «Այրարատյան» որբանոցներից՝ 300 որբ, 1928թ. մայիսին՝ Լիբանանի Ջունիե քաղաքում գործող Եգիպտոսի «Որբախնամ Ընկերություն» որբանոցի 65 սաներին, իսկ մինչև 1930 թ.՝ Կեսարիայից գաղթած երեք խումբ որբերի³³:

Թուրքիայի սահմաններից որբերի դուրս բերումը դժվարին խնդիր էր: Երբ «Մերձավոր Արևելքի Նպաստամատուց»-ը³⁴ ձեռնարկում էր հայ որբերի տեղափոխությունը, թուրքական իշխանությունները ամեն կերպ խանգարում էին՝

³⁰ Դար մը..., հ. I, էջ 125:

³¹ Մ. Գոնայեան, նշվ. աշխ., էջ 152:

³² Սուրէն Պահլաւունի, նշվ. աշխ., էջ 8:

³³ Է. Մեֆոնյան, «Հայկական բարեգործական րնդհանուր միության որբախնամ գործունեությունը 1910-30-ական թվականներին», Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, Թ. 4, ՀՀ ԳԱԱ Հայոց Յեղասպանության թանգարան-ինստիտուտ, Եր., 2001, էջ 139:

³⁴ Ամերիկյան նպաստամատուցը 1915-ին սկսել էր իր գործունեությունը որպես «Հայկական նպաստամատուց կոմիտե»: 1919 թ. ԱՄՆ Կոնգրեսի հատուկ որշումով այն վերանվանվեց «Մերձավոր Արևելքի նպաստամատուց» և ստացավ տասնամյա գործունեության օժանդակություն: Այս մասին մանրամասն տես Ջ. Լ. Բարտոն, *Story of Near East Relief (1915-1930). An Interpretation*, New York, 1930, p. 431:

առաջացնելով զանազան խոչընդոտներ: Որբերը կարող էին Առաջին համաշխարհայինի ընթացքում մահացած թուրք բնակչության քանակը հավասարակշռել, բանակը հզորացնել, կարևոր դեր խաղալ ամուսնությունների ու գենետիկական փոփոխությունների հարցում:

Այս մտայնությամբ թուրքական կառավարությունը շրջաբերականներ էր ուղարկում սահմանային անցակետեր, որոնցով թույլ չէր տալիս երեխաներին երկրից դուրս տանել: Այս շրջաբերականների մեջ ասվում էր, որ Առաջին համաշխարհայինի տարիներին հազարավոր թուրք մանուկներ են որբացել, որոնց այժմ նպաստամատուցը հայ որակելով դուրս է բերում մեր երկրի սահմաններից: Որբացած այս մանուկներին չպետք է թույլ տանք վերստին որբանան, ծնողներից հետո կորցնեն նաև հայրենիք: Սահմանային անցակետերում տեղի էին ունենում քաշքշուկներ: Պահանջվում էր ներկայացնել հայ լինելու մասին այլևայլ ապացույցներ: Երբեմն, նույնիսկ, հատուկ շրջաբերականներով պահանջում էին սահմանից դուրս հանված որբերին ևս վերադարձնել Թուրքիա³⁵:

ՀԲԸՄ-ը, հիմնելով որբախնամ հաստատություններ, միևնույն ժամանակ խնդրի վերջնական լուծումը տեսնում էր որբերին հորհրդային Հայաստան տեղափոխելու մեջ:

1924-ին Հայաստան տեղափոխվեց որբերի առաջին խումբը՝ կազմված երուսաղեմի «Արարատյան», Բեյրութի «Քելեկյան» որբանոցների և Հալեպի «Կիլիկյան» արհեստանոց-որբանոցի 250 չափահաս սաներից: Տեղափոխության բոլոր ծախսերն իր վրա վերցնելուց զատ Միությունը յուրաքանչյուր որբի համար Հայաստանի կառավարությանը վճարեց 100 ամերիկյան դոլար³⁶:

ՀԲԸՄ-ը վիթխարի աշխատանք կատարեց որբերին փրկելու, օտար միջավայրում նրանց հայ պահելու գործում: «Քելեկյան-Միսվան» որբանոցը եղավ ՀԲԸՄ-ի ամենախոշոր որբախնամ հաստատությունը, որն իր դռները վերջնականապես փակեց 1932-ի հոկտեմբերին: ՀԲԸՄ-ն այսօր էլ շարունակում է մնալ հայ ժողովրդի կողքին՝ նպաստելով նրա բոլոր ձեռքբերումներին:

Вера Саакян

Деятельность сиротских приютов “Келекян” и “Сисван”

Мемуары Самвела Пораняна, написанные на турецком языке армянской графикой, были пересланы в Армению из Дамаска через иммигранта Арутюна Паляна, и он в год пятидесятилетия Геноцида армян перевел их на армянский и подготовил к печати. Однако, по каким-то обстоятельствам они остались неопубликованными и преданы забвению. В рамках настоящей статьи проделана попытка

³⁵ ВСА 030 10 108 704 7/1:

³⁶ Է. Մելիքյան, նշվ. աշխ., էջ 140:

извлечь из них некоторые подробности о деятельности сиротских приютов “Келекян” и “Сисван”.

Vera Sahakyan

The Activity of the “Kelekyan” and “Sisvan” Orphanages

Samvel Poranyan's memoirs written in Turkish in Armenian characters were brought to Armenia from Damascus in 1946 by Harutyun Palyan. He translated them into Armenian and prepared for publication on the occasion of the 50th anniversary of the Armenian Genocide. But for some reasons they remained unpublished and were completely forgotten.

In the present article we try to elucidate the foundation and activities of the “Kelekyan” and “Sisvan” orphanages on the basis of information drawn from these and several other unpublished memoirs.